

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎ**

**ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS  
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*Խմբագրական խորհուրդ՝*

**Արամ Մինոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Արամ Սիմոնյան** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	6
Oghannes Khorikyan, K VOПРОСУ О ЦЕНТРЕ САТРАПСКОЙ АРМЕНИИ Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	14
Артак Мовсисян, Лианна Карапетян, О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE	
Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ .....	24
Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK	
Дмитрий Димидюк, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА .....	33
Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-ՄԻ Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ	
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY	
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	48
Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II	
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.) .....	55
Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА)	
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)	
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՐԸ .....	63
Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR	
Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ) .....	77
Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ .....	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ .....	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА .....	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂՐԵԶԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

**ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ**  
**АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ .....	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ .....	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ .....	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

**ՄՓՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ. ....	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019  
 Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ..... 191  
 Арман Егиазарян, Алик Гарибян, Дианна Давтян, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ  
 Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH  
 Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 200  
 Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ  
 Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA

**ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՄ  
 ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS**

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ ..... 206  
 Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА  
 Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ  
 УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ..... 214  
 Левон Овсебян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ  
 Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՄ  
 РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր: ..... 222  
 ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ ..... 224  
 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ..... 226  
 INFORMATION ABOUT THE AUTHORS ..... 228  
 Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ..... 230  
 NOTICE FOR THE AUTHORS

XIX Դ. ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՒՐ

*Բանալի բառեր.* Կ. Պոլիս, Զմյուռնիա, մասոնություն, ազատ որմնադիր, օթյակ, վարպետ, Գերհարգելի Վարպետ, «Անգլիայի մեծ օթյակ», «Ֆրանսիայի Մեծ Արևելք»:

Մասոնության հետ հայության առաջին առնչությունները կապված են «Անգլիայի Մեծ օթյակի»<sup>1</sup> հետ և վերաբերում են 18-րդ դարին: Այդ մասին մեզ հասած առաջին փաստերը վկայում են, որ դրանք մինչև Կ. Պոլսում մասոնական առաջին օթյակների կազմավորումը հիմնվել են Զմյուռնիայում և Հալեպում<sup>2</sup>: Մասոնությանը հայերի անդամագրվելու վերաբերյալ մեզ հասած առանձին փաստաթղթերը չնայած կցկտուր են, բայց նաև վկայում են, որ դեռևս 18-րդ դ. հայությունը անտարբեր չի եղել ազատ որմնադրության ուսմունքի նկատմամբ: Հայության հետաքրքրությունը մասոնության նկատմամբ խորացավ հատկապես 1840-ական թթ., երբ Եվրոպա ուսումնառության էին մեկնում ոչ միայն հարուստ ամիրաների զավակները, այլև աղքատ ընտանիքների ուսումնատենչ տղաները: Ուսումնառության տարիներին երիտասարդ պոլսահայերն ու զմյուռնահայերը մոտիկից շփվեցին մասոնների հետ և հրապուրվեցին նրանց գաղափարախոսությամբ: Այդ երիտասարդների գաղափարական ձևավորման վրա մեծ ազդեցություն թողեցին 1840-ական թթ. եվրոպական հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարը, ազգային համախմբման և միավորման համար շարժումները: Նրանք հատկապես 1848 թ. ֆրանսիական հեղափոխությանն էին պարտական իրենց «կեանքի յառաջադիմական երեսույթներից շատերին»<sup>3</sup>, այդ թվում՝ մասոնությանն անդամագրվելու համար: Մեծ մասամբ Փարիզի և Վենետիկի ուսումնական հաստատություններում հիմնարար կրթություն ստացած, օտար լեզուների տիրապետող, եվրոպական լուսավորության և ազատամտության գաղափարներով տոգորված արևմտահայ երիտասարդ մտավորականներից և «եվրոպականացած» վաճառականներից ոմանք մասոնական օթյակի անդամ դարձան դեռևս ուսումնառության տարիներին: Նրանցից Սորբոնի համալսարանի շրջանավարտ, Օսմանյան կայսրության ապագա դիվանագետ, Կ. Պոլսի Գերագույն ժողովի լոգոֆեթ<sup>4</sup>, պոլսահայության շրջանում ազգային սահմանադրության գաղափարն առաջինը հղացած<sup>5</sup> Հակոբ Կրճիկյանը (1806-1865) 1840-ական թթ. սկզբում Փարիզում անդամագրվել էր ֆրանսիական «La Persevererante Armitie» («Հարատևող բարեկամություն») օթյակին: Այս օթյակի անդամ էր նաև պոլսահայ դրամատեր, երիտասարդ վաճառական Միքայել Երամյանը<sup>6</sup>: 1848 թ. ֆրանսիական հեղափոխության ավազանում մկրտված «առաջադիմութեան անձնուէր գինուոր»<sup>7</sup> Ստեփան Ոսկանյանը (1825-1901), ով այդ «պայքարն առաջին անգամ մտցնողը եղավ հայութեան խավարչտին շրջանակում»<sup>8</sup>, իտալական «Liberta» («Ազատություն») օթյակի անդամ էր<sup>9</sup>: 1850-ականն թթ. Լոնդոնի անգլիական «Jordan» («Հորդանան») թիվ 201 օթյակին անդամագրվել էին Թանգիմաթի դարաշրջանի հայ փայլուն մտավորականներից «Ազդարար Բյուզանդյան» թերթի խմբագիր հրատարակիչ Խաչատուր Ոսկանյանը

\* Հոդվածը ներկայացվել է 08.07.2019 թ., գրայնստվել է 16.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

<sup>1</sup> Տե՛ս Անգլիայի Մեծ օթյակը կազմավորվել է Լոնդոնում գործող մասոնական չորս օթյակների միավորումով, 1717 թ. հունիսի 24-ին սբ. Իոհանի (Հովհանի) օրը, ով համարվում է անգլիական մասոնության հովանավորը: Ներկայումս «Անգլիայի Մեծ օթյակը» աշխարհում ամենազանգվածային օթյակն է, որն ունի 200 հազար անդամ և 7 հազար օթյակ: <https://www.ugle.org.uk/about>.

<sup>2</sup> Տե՛ս Պէլլերեան Ա., Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական «Սէր» օթեակը ժԹ դարուն: «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուք, 2001, էջ 144:

<sup>3</sup> Աճառեան Հ., Պատմութիւն Հայոց նոր գրականութեան, Պէյրուք, 1940, էջ 34:

<sup>4</sup> Տե՛ս Պէրպլերեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլսի, 1871, էջ 321; Թոփչեան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 235:

<sup>5</sup> Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», Վիէննա, 1902, հոկտեմբեր, N 10, էջ 326:

<sup>6</sup> Տե՛ս «Հայրենիք», 1955, փետրվար, N 2, էջ 79; Պէրպլերեան Ա., նշվ. աշխ., էջ 151, 155; Jamgocyan O., Les Francs-Maçons arméniens: La Constitution de l'Arménie ottomane, Constantinople, 1863, p. 64.

<sup>7</sup> Լէօ, Ստեփան Ոսկան, «Մուրճ», Թիֆլիս, 1901, N 11, էջ 117:

<sup>8</sup> Զօպանեան Ա., Դէմքեր. «Անահիտ», փարիզ, 1903, հունիս-հուլիս, N 6-7, էջ 85-86:

<sup>9</sup> Տե՛ս «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 82-83:

(1818-1895) և հայ մասոնության ամենակարկառուն դեմքերից մեկը՝ Սերովբե Ազնավուրը<sup>1</sup> (1814-1890):

XIX դ. հայության շրջանում մասոնության տարածման գործում թերևս ոչ ոք այնքան մեծ ներդրում չունի, որքան Ս. Ազնավուրը: Նա ծնվել է Կ. Պոլսում, հայ կաթոլիկ Ազնավուրյանների գերդաստանում<sup>2</sup>: Ս. Ազնավուրը 1840-ական թթ. պոլսահայ ուսումնաստենչ այն երիտասարդներից էր, ում հաջողվեց բարձրագույն կրթություն ստանալ Եվրոպայում, սովորել Լոնդոնի և Մանչեսթրի համալսարաններում: Վերադառնալով հայրենի Կ. Պոլիս, նա 1846 թ. ապրիլի 1-ին իր նման մի խումբ ուսյալ երիտասարդների հետ մասնակցեց «Համազգային ընկերության» հիմնադրմանը<sup>3</sup>: «Անգլիագետ զարգացած հայ երիտասարդը» իր գրիչն այդ տարիներին օգտագործում էր «հայ ընտանիքների բարքերը ազնվացնելու համար»<sup>4</sup>: Ս. Ազնավուրի մասին մեզ հասած տեղեկությունները հստակ չեն պատասխանում այն հարցին, թե Անգլիայում նա ի՞նչ մասնագիտություն է ստացել: Հայ մասոնության պատմության գիտակ և բարձրաստիճան մասոն Ռուբեն Բերբերյանը<sup>5</sup> հայկական «Սեր» օթյակին նվիրված հոդվածում Ս. Ազնավուրին սխալմամբ<sup>6</sup> անվանում է ճարտարապետ<sup>7</sup>:

Հայ մասոնության մեկ այլ գիտակ՝ «Հայաստան» թիվ 1185 օթյակի Գերհարգելի Վարպետ Արմենակ Ֆեներջյանը, Ս. Ազնավուրին ներկայացնում է որպես «արհեստով հանձնակատար»<sup>8</sup>, «Պէրաթը» վաճառական<sup>9</sup>: «Մասիս» թերթի խմբագիր Կ. Յուրուձյանը, Մ. Օրմանյանը, Վ. Զարդարյանը և Յ. Ճ. Սիրունին Ս. Ազնավուրին ներկայացնում են փաստաբան<sup>10</sup>: Անգլիական «Jordan» («Հորդանան») օթյակի անդամների ցուցակում, մասնագիտության սյունակում, Ս. Ազնավուրի անվան դիմաց գրված է փաստաբան, իսկ Կ. Պոլսի ֆրանսիական «Oriental» («Արևելյան») օթյակի անդամների ցուցակում՝ վաճառական<sup>11</sup>: Սփյուռքահայ պատմաբան Արթուր Բեյլերյանը հայկական «Սեր» օթյակին նվիրված հոդվածում, Ս. Ազնավուրի մասին պատմելիս, նրա մասնագիտությունը չի նշում: Նրա հրապարակած «Սեր» օթյակի անդամների ցուցակում, որը վերցրված է «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի արխիվներից, Ս. Ազնավուրի մասնագիտության դիմաց նշված է առևտրական<sup>12</sup>: Իրողությունն այն է, Ս. Ազնավուրն Անգլիայում իսկապես փաստաբանի մասնագիտություն է ստացել: Հետագայում նա, որպես իրավաբան, Կ. Պոլսի պատրիարքարանի դատական գործերի տեսուչ էր<sup>13</sup>,

<sup>1</sup> Տե՛ս «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 83, 1954, հոկտեմբեր, N 10, էջ 93, Պէրպէրեան Ա., նշվ. աշխ., էջ 151, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 57-58:

<sup>2</sup> Առաջին Ազնավուրյանները Թուրքիա են եկել Վրաստանից: Նրանց նախահայր Դավիթը հաստատվել է Սեբաստիայում, սուլթանից ստացել տարածաշրջանի հարկերը հավաքելու իրավունքը: Ազնավուրյանները Կ. Պոլսում եղել են եկեղեցականներ, արքունի սեղանավորներ, իսկ Զմյուռնիայում՝ վաճառականներ և ոսկերիչներ: Սերովբեի պապը՝ Կարապետ ամիրան արքունի սեղանավոր էր, հայ կաթոլիկ համայնքի երևելի դեմքերից մեկը: Տե՛ս Զարդարեան Վ., Յիշատակարան (1512-1933), Գ մաս, Գահիրէ, 1939, էջ 77:

<sup>3</sup> Տե՛ս Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը: Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ. Պոլիս, 1910, էջ 250:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 253:

<sup>5</sup> Ռուբեն Բերբերյան (1873-1942), արդյունաբերող, լրագրող, գիտական և քաղաքական գործիչ: 1902 թ. Անդամագրվել է Փարիզի «Les Compagnons Ardets» օթյակին: 1928 թ. Փարիզում անդամագրվել է «Հյուսիսային Աստղ» օթյակին, ընտրվել 18-րդ աստիճանի վարպետ: 1930թ. ընտրվել է օթյակի «Արարողակարգի Վարպետ», 1935թ. դարձել Երկրորդ Վերահսկիչ: 1931-1932թթ. եղել է Փարիզի «Ազատ Ռուսաստան» օթյակի քարտուղարը: Մասոն էին նաև նրա եղբայր Մինասը և որդին՝ Լևոնը:

Տե՛ս Берберова Н.Н., Люди и ложи: русские масоны XX столетия. Нью-Йорк, 1986, Москва, 1991, с.113.

<sup>6</sup> Ռ. Բերբերյանը Ս. Ազնավուրի մասնագիտությունը շփոթում է կրտսեր տղայի՝ Հովսեփի Ազնավուրի (1854-1935) մասնագիտության հետ, ով հայտնի ճարտարապետ էր: Նա 1898 թ. Կ. Պոլսում կառուցված Սուրբ Ստեփանոս ուղղափառ երկաթե եկեղեցու, ինչպես նաև «Սելամե հանի» և բազմաթիվ այլ կառույցների ու շինությունների հեղինակ էր: Տե՛ս Զարդարեան Վ. Յիշատակարան, Գ մաս, էջ 80-90:

<sup>7</sup> Տե՛ս Բերբերեան Ռ., Հայ մասոնները եւ «Սէր» օթյակը Պոլսոյ մէջ: «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 77:

<sup>8</sup> Տե՛ս Ֆէներճեան Ա., Ազատ որմնադրութիւնը հայոց մէջ: Հայրենիք, 1954, հոկտեմբեր, N 10, էջ 93:

<sup>9</sup> Տե՛ս Ֆէներճյան Ա., «Սէր» օթյակը: 1955, հունիս, N 6, էջ 90:

<sup>10</sup> Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Բ, Պէյրուք, 1961, էջ 4359; Զարդարեան Վ. Յիշատակարան, Գ մաս, էջ 77; Սիրունի Յ. Ճ., Պոլիս եւ իր դերը, հ. 3, Անթիլիաս, 1987, էջ 208:

<sup>11</sup> Տե՛ս Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 48, 50:

<sup>12</sup> Պէլլէրեան Ա., ԺԹ դարու հայկական «Սէր»օթակի անդամ ազատ-որմնադիրներու ընդհանուր ցուցակ: «Հայկազեան հայագիտական հանդես», 2003, էջ 425:

<sup>13</sup> Տե՛ս Զարդարեան Վ. Յիշատակարան, Գ մաս, էջ 78:

բայց ընտանիքի նյութական կարիքները հոգալու համար զբաղվում էր նաև առևտրական գործունեությամբ:

Ս. Ազնավուրի ծանոթությունը մասնության հետ տեղի է ունեցել Անգլիայում ուսումնառության տարիներին: 1854 թ. փետրվարի 17-ին նա Լոնդոնի «Հորդանան» թիվ 201 օթյակում<sup>1</sup> ձեռնադրվել է ազատ որմնադիր<sup>2</sup>: Ս. Ազնավուրը եղել է այս օթյակի կարևոր դեմքերից մեկը: Անգլիական աղքյուրների վկայությամբ՝ 1854թ. «Հորդանան» օթյակի վարպետը Սփուներն էր, իսկ նրա առաջին տեղակալը կոնստանդնուպոլսեցի վաճառական Սերովբե Ազնավուրը<sup>3</sup>: Լոնդոնում գտնված ժամանակ նա բացել է ենիչերիների վերաբերյալ թանգարան, որը լավ ընդունելության է արժանացել: Թանգարանի այցելուների թվում եղել է նաև Վիկտորիա թագուհին<sup>4</sup>:

«Հորդանան» օթյակից բացի Ս. Ազնավուրն անդամագրվել է նաև Մանչեսթրի «Odd Fellow» եղբայրական գաղտնի ընկերությանը<sup>5</sup>, որը Միացյալ թագավորությունում XIX դ. ամենախոշոր և ամենահարուստ եղբայրական կազմակերպությունն էր<sup>6</sup>: Նա Եվրոպայում ուսանած կամ վաճառականությամբ զբաղված արևմտահայ այն եզակի դեմքերից է, ով ազատ որմնադիրների գաղտնի ընկերության անդամ դառնալուց և օթյակում որոշակի առաջընթաց ունենալուց հետո «գիտական, ազատական, հասարակական լեցուն պաշարով»<sup>7</sup> վերադարձավ հայրենի Կ. Պոլիս և ձեռնամուխ եղավ մասնության գաղափարների տարածմանը և օթյակների ստեղծմանը: Այդ իմաստով 1850-ական թվականները նպաստավոր տարիներ էին, որը պայմանավորված էր Արևելյան (Ղրիմի) պատերազմի ավարտից հետո սկիզբ առած Թանգիմաթի երկրորդ փուլով և «Թուրքիան եվրոպականացնելու» մեծ տերությունների պահանջով: Դա ոգևորություն առաջացրեց Կ. Պոլսի ոչ միայն քրիստոնյա համայնքների բնակչության, այլև այնտեղ բնակվող օտարերկրացիների շրջանում, որոնք ձեռնամուխ եղան մասոնական օթյակների հիմնադրմանը:

1850-ական թթ. Կ. Պոլսում հիմնված բոլոր օթյակների նախաձեռնողները եվրոպացիներ էին, որոնց օթյակները գործում էին իրենց մայրենի լեզվով: Առաջնորդվելով բարենորոգումների խոստումներով «Անգլիայի Մեծ օթյակը» 1856 թ. նոյեմբերի 25-ին Կ. Պոլսի Հասքեո թաղամասում, Ոսկեղջյուրի վրա 28 անգլիացի ծովայինների նախաձեռնությամբ, ովքեր ծառայում էին օսմանյան նավատորմում, հիմնեց անգլախոս առաջին կանոնավոր<sup>8</sup> «Oriental» («Արևելյան») թիվ 687 օթյակը: 1857 թ. օգոստոսի 7-ին տեղի ունեցավ օթյակի պաշտոնական բացումը, որին այդ օրն անդամագրվեցին Ս. Ազնավուրը և նրա գաղափարակից գործընկեր, վաճառական Կոզմա Աղջիկյանը: Վերջինս մինչ այդ Մանչեսթրի «Integrity» («Ուղղամտություն») թիվ 168 օթյակի անդամ էր: «Արևելյան» օթյակին անդամագրվելուն պես Ս. Ազնավուրը ոչ միայն դարձավ օթյակի բարձրաստիճան մասոններից մեկը, այլև նպաստեց դրա համալրմանը պոլսահայ ևս 15 նոր անդամներով<sup>9</sup>: Օթյակը գործեց բավական երկար,

<sup>1</sup> «Հորդանան» թիվ 201 օթյակը հիմնվել է 1810թ. ապրիլի 25-ին Լոնդոնում, անգլիացի 9 մասոնների կողմից: Օթյակի հիմնադիր նիստին մասնակցել է «Անգլիայի Մեծ օթյակի» անդամ Ռոնալդը, որտեղ առաջին վարպետ է ընտրվել վաճառական Ռիչարդ Ուիլսոնը: Այս օթյակը գործել է մինչև 1950թ.: [www.Jordanlodge201.org.uk/history/1850-1900](http://www.Jordanlodge201.org.uk/history/1850-1900).

<sup>2</sup> Տե՛ս «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 77, 1954, հոկտեմբեր, N 10, էջ 93; Պերպերեան Ա., նշվ. աշխ., էջ 151; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 58:

<sup>3</sup> Տե՛ս [www.Jordanlodge201.org.uk/history/1850-1900](http://www.Jordanlodge201.org.uk/history/1850-1900). htm.

<sup>4</sup> Տե՛ս Զարդարեան Վ. Յիշատակարան, Գ մաս, էջ 79:

<sup>5</sup> Տե՛ս «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 77; Զարդարեան Վ., նշվ. աշխ., էջ 78; Պերպերեան Ա., նշվ. աշխ., էջ 151; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 58:

<sup>6</sup> Odd Fellows կամ Oddfellows, ինչպես նաև Odd Fellowship կամ Oddfellowship օթյակներից բաղկացած միջազգային եղբայրություն, որը 1730 թ. հիմնվել է Լոնդոնում: Ներկայումս այն համարվում է իր մեծությամբ երկրորդ բրիտանական անկախ օրդենը, որի միայն ամերիկյան կազմակերպությունը աշխարհի 30 երկրներում ունի մոտ 10 հազար օթյակ և 600 հազար անդամ: Ընդհանուր առմամբ օրդենի բոլոր մասնաձյուղերը միասին վերցրած աշխարհում ունեն մի քանի միլիոն անդամ: Տե՛ս [https://en.wikipedia.org/wiki/Odd\\_Fellows](https://en.wikipedia.org/wiki/Odd_Fellows).

<sup>7</sup> «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, N 10, էջ 92:

<sup>8</sup> Մասոնությունում կանոնավոր է համարվում այն օթյակը, որը ստեղծվում է որևէ երկրի «Մեծ» կամ «Մեծ Արևելք» մայր օթյակի արտոնագրով: Տե՛ս Карпачев С. Массоны. Словарь. М., 2008, с. 334-336.

<sup>9</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 78-79, 1936, հոկտեմբեր, N 8, էջ 225-226; «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 77, 83; Պելլերեան Ա., նշվ. աշխ., էջ 151-152, 178; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 59-60:



1856 թ. մինչև 1935 թ. հոկտեմբերի 10-ը, երբ թուրքական կառավարության որոշումով փակվեց Կ. Պոլսում գործող մյուս օթյակների հետ միասին:

1859 թ. նոյեմբերի 19-ին Ջնյուռնիայում հիմնվեց անգլախոս «Homer» («Հոմեր») թիվ 806 օթյակը, որին 1860 թ. հունվարի 25-ին «Անգլիայի Մեծ Օթյակը» շնորհեց արտոնագիր: Ջնյուռնիայի Մեջիդիե փողոցի «Մասոնական դահլիճում» 1860 թ. օգոստոսի 7-ին տեղի ունեցավ օթյակի պաշտոնական բացումը, որի առաջին վարպետ ընտրվեց անգլիացի Հայդ Բլարքը, իսկ Ս. Ազնավուրը զբաղեցրեց Մեծ Վերահսկիչի պաշտոնը, որը շոտլանդական կանոնակարգի մասոնությունում օթյակի երկրորդ պաշտոնն է վարպետից հետո: «Հոմեր» օթյակի հիմնադիր անդամներից մեկը հայ վաճառական Միքայել Երամյանն էր: Օթյակը գործեց 27 տարի և 1877 թ. փետրվարի 15-ին իր արտոնագիրը վերադարձրեց «Անգլիայի Մեծ Օթյակին»՝ Ջնյուռնիայում տեղի ունեցած քաղաքական դեպքերի պատճառով<sup>1</sup>:

1861 թ. նոյեմբերի 9-ին Կ. Պոլսում Անգլիայի դեսպան, «Herteford» («Հերթֆորդ») օթյակի անդամ Հենրի Բուլվեր Լիթոնի<sup>2</sup> նախաձեռնությամբ և Ս. Ազնավուրի անմիջական ջանքերով հիմնվեց անգլախոս նոր օթյակ, որն ի պատիվ դեսպանի կոչվեց «Bulwer» («Բուլվեր») թիվ 891 օթյակ: Հիմնադրման պահին օթյակի Գերհարգելի Վարպետ ընտրվեց Ս. Ազնավուրը: Կ. Պոլսի մասոնության պատմության մեջ սա առաջին դեպքն է, երբ անգլախոս օթյակի վարպետ էր ընտրվում ոչ թե անգլիացի, այլ հայ ազատ որմնադիր: Դա վկայում է այն բարձր հեղինակության մասին, որ վայելում էր Ս. Ազնավուրը օտարազգի մասոնների շրջանում: «Բուլվեր» օթյակին 1860-ական թվականներին անդամագրվեցին ընդհանուր առմամբ 11 հայ ազատ որմնադիրներ, որոնք Կ. Պոլսում ճանաչված դեմքեր էին<sup>3</sup>:

Կաթոլիկ Սերովբե Ազնավուրը ծանոթ էր Կ. Պոլսում գոյություն ունեցող կրոնական և ընկերային մտայնություններին, լավ էր հասկանում, որ մայրաքաղաքային ավանդապահ և պահպանողական հայ համայնքում հեշտ չէ մասոնության գաղափարները տարածելը: Սակայն դա ամենևին չէր խանգարում նրան դեսպան Հ. Բուլվեր Լիթոնի հետ միասին դառնալ Կ. Պոլսում մասոնության գլխավոր քարոզիչն ու օթյակների հիմնադիրը: Նա փափագում էր զուտ հայկական օթյակ ստեղծել, որն իր շարքերում կհամախմբեր մայրաքաղաքի առաջադեմ հայ երիտասարդ մտավորականներին ու «եվրոպականացած» վաճառականությանը: Այդ նպատակի իրականացման առաջին քայլը եղավ 1862 թ. հունվարի 25-ին Կ. Պոլսում «Հայկ» կամ «Օրիոն» անվանումով հայկական եղբայրական միության ստեղծումը, որը Մանչեսթրի «Odd Fellows» օթյակի մասնաճյուղն էր<sup>4</sup>:

Կ. Պոլսում «Odd Fellows» օթյակի մասնաճյուղ ստեղծելու գաղափարի հեղինակը Անգլիայի դեսպան Հ. Բուլվեր Լիթոնն էր<sup>5</sup>, իսկ «Հայկ» կամ «Օրիոն» միության հիմնադրման նախաձեռնողը և անմիջական կազմակերպիչը՝ նրա հետ սերտ կապեր ունեցող Ս. Ազնավուրը<sup>6</sup>: Նա լավ էր հասկանում, որ հայկական նոր միության ստեղծումը Կ. Պոլսի խավարամիտների ու պահպանողականների շրջանում առաջ է բերելու դժգոհություն, ուստի շտապեց մամուլի միջոցով պարզաբանել «Հայկ» միության ստեղծման հիմնական նպատակը: Նա «Մասիս» թերթում հայտնեց, որ 1862 թ. փետրվարի 4-ին Կ. Պոլսի «Արևելյան թատրոնում», ի նպաստ Մանչեսթրի «Odd Fellows» օթյակի մասնաճյուղ «հայկական Օրիոն սենեակի» տեղի է ունենալու հանդիսություն: Հանդեսը բացվելու է երգով, որը «Odd Fellows»-ի անդամները երգում են ի պատիվ իրենց ընկերության: Այնուհետև ներկայացվելու է ֆրանսիացի նշանավոր գրող Վիկտոր Հյուգոյի<sup>7</sup> «Անջելո» դրաման, որի ամենադժվար դերը կատարելու է Արուսյակ Փա-

<sup>1</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 78-79, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 153-154, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 65:

<sup>2</sup> Հենրի (Էդվարդ) Բուլվեր Լիթոն (1801-1872), բրիտանացի բարոն, լիբերալ քաղաքագետ, դիվանագետ և գրող: Եղել է օթյակի Մեծ Վարպետ: Նրա մասին մանրամասն տե՛ս Sommer Dorothe. Freemasonry in the ottoman. Empire: A History of the Traternity and its Intluence in Syria and the Levant. I. B. Tauris. 2014, Christensen A. C. Edward Bulwer Litton: The Tiction of New Regions. Athens, Georgia, 1976; Mitcheld G. Bulwer Lytton: The Rise and Tall of a Victorian Man of Letters. London, New York, 2003.

<sup>3</sup> Տե՛ս Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 79; Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 154; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 62:

<sup>4</sup> Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1862 թ. հունվարի 27, N 520:

<sup>5</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 155:

<sup>6</sup> Տե՛ս «Մասիս», 1864, օգոստոսի 22, N 654:

<sup>7</sup> Ֆրանսիական ռոմանտիզմի ռահվիրա Վիկտոր Հյուգոն (1802-1885) գրող լինելուց բացի նաև բարձրաստիճան մասոն էր: Նա 1844-1885թթ. «Սիոնի պրիորատ» օրդենի «ղեկակալ» (Մեծ մագիստրոս) էր: Տե՛ս Դո-

փազյանը<sup>1</sup>: Եվրոպական արժեքներ կրող Ս. Ազնավուրը միաժամանակ իր վրդովմունքն է հայտնում, որ մի քանի «տգէտ նախապաշարեալ մարդիկ» փորձում են ճնշում գործադրել դերասանուհու ամուսնու վրա, որպեսզի նա կնոջը թույլ չտա բեմ դուրս գալ: Ազատամիտ հայացքների տեր Ս. Ազնավուրի կարծիքով՝ դա նույն բանն է, որ գվարթ դայլայլող թռչնին փակես վանդակում, նկարչից խլես վրձինը, իսկ մատենագրից՝ գրիչը<sup>2</sup>:

Ս. Ազնավուրը հասկանում էր, որ ընկերության ստեղծումը միանշանակ չի ընկալվելու, ուստի ձգտում էր Կ. Պոլսի հանրությանը ցույց տալ, որ «Հայկ» կամ «Օրիոն» միությունը բարեգործական է և կապ չունի մասոնության հետ: Այդ հարցում նրան աջակցում էր արևմտահայ ազատական հոսանքի պարագլուխ, «Մասիս» թերթի մասոն խմբագիր Կարապետ Յուրուճյանը<sup>3</sup>: Նա իր թերթում հնարավորություն տվեց Ս. Ազնավուրին ազատ հանդես գալ «Odd Fellows» և «Հայկ» օթյակների բնույթը, նպատակներն ու գործունեությունը ներկայացնող և մասոնությունը քարոզող հոդվածներով: «Հայկ» օթյակի ստեղծումից օրեր անց «Մասիսը» տեղեկացնում էր Կ. Պոլսի հանրությանը, որ հունվարի 26-ին միությունը կազմակերպում է պարահանդեսներ և ծովային զբոսանքներ, իսկ 30-ին՝ «Արևելյան» թատրոնում առաջին տարեկան պարահանդեսը, որից ստացված շահույթը «քաղաքին մէջի աղքատանոցներու ողորմութեան կը բաշխուի»<sup>4</sup>: «Հայկ» միության բարեգործական առաջին քայլերը՝ «Արևելյան թատրոնում» կազմակերպած ներկայացումները և պարահանդեսները մեծ ընդունելություն գտան «հայ մտաւորական ու բարձր շրջանակներու մէջ», և շատերը սկսեցին «հետաքրքրութիւն ցուցնել դեպի այս մարդասիրական ընկերութիւնը»<sup>5</sup>: Միության պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1862թ. օգոստոսի 21-ին, Կ. Պոլսի Պերա թաղամասի «Փեսել Քրեյմրի» սրահում, բազմաթիվ անգլիացի հյուրերի և հայ անդամների մասնակցությամբ: Պաշտոնական արարողությունից հետո անգլիացիներն ու հայերը մասոնների օրինակով խնջույքի սեղան նստեցին, ճաշեր արտասանեցին և երգեցին<sup>6</sup>:

Կ. Պոլսի հայությունը «Հայկ» միությանը մոտից ծանոթացնելու նպատակով Ս. Ազնավուրը «Մասիսում» տպագրեց միությանը անդամագրվելու պայմանները և նյութապես աջակցելու շաբաթական ու տարեկան տուրքի չափերը<sup>7</sup>: Չնայած հայկական միության ստեղծման կապակցությամբ Ս. Ազնավուրի ուրախությանը, ով մամուլում քանիցս հանդես եկավ որպես բարեգործական «Հայկ օթյակի նախագահ» և ներկայացրեց իրենց կատարած բարեգործությունները, այնուամենայնիվ ոչ բոլորը նրան հավատացին: Մասնավորապես, նա ունեցավ լուրջ ընդիմախոս՝ հանձին «մութ» և «խավարամիտ ուժերի»: Մանչեսթրյան օթյակի և «Հայկ» միության քննադատությամբ հանդես եկավ «Պոլսոյ խաւարեալներու պետ»<sup>8</sup> Հ. Տերոյենց Չամուռճյանը<sup>9</sup> պատվելին: Նա 1860-ական թթ. սկսած մեծ թվով գաղափարական հակառակորդներ ուներ «մանաւանդ ճահիլներու, բողոքականներու, ազատախոհներու մէջէն»<sup>10</sup>, ովքեր

голицин Ю. М., Тайные общества в истории человечества, или Кто правит жиром, Ростов-на-Дону, 2010, с. 57; Курбатов В. И. Тайное общество масонов. М. 2007, с. 73.

<sup>1</sup> Արուսյակ Փափազյան (1841-1907), հայ առաջին արհեստավարժ դերասանուհի: 1857-1859 թթ. եղել է մասոն Սրապիոն Հեքիմյանի թատերախմբի, իսկ 1861-1863 թթ.՝ «Արևելյան թատրոնի» առաջատար դերասանուհի: 1866թ. մասոն Ստեփան Էքշյանի հետ ստեղծել է սեփական թատերախումբ: Տե՛ս Ստեփանյան Գ. Արուսյակ Փափազյան, Ե., 1955; նույնի՝ «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության», հ. 1, Ե., 1962, էջ 175:

<sup>2</sup> Տե՛ս «Մասիս», 1862, հունվարի 27, N 520:

<sup>3</sup> Կարապետ Յուրուճյանը (1823-1904) Կ. Պոլսում 1862թ. նոյեմբերի 24-ին հիմնադրված ֆրանսախոս «L'Union d' Orient» («Արևելքի Միություն») օթյակի առաջին վերահսկիչն էր: 1866թ. անդամագրվել է նաև Կ. Պոլսի հայկական «Սեր» օթյակին: Տե՛ս Պէլլերեան Ա., նշվ. աշխ., էջ 175; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 83:

<sup>4</sup> «Մասիս», 1862, հունվարի 27, N 520:

<sup>5</sup> «Հայրենիք», 1955, հունիս, N 6, էջ 91:

<sup>6</sup> Տե՛ս «Մասիս», 1862, օգոստոսի 25, N 551:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, 1862, նոյեմբերի 8, N 560:

<sup>8</sup> «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, N 10, էջ 93:

<sup>9</sup> Հովհաննես Տերոյենց Չամուռճյանին (1801-1888) նրա կենսագիր Յ. Գ. Մրմրյանը համարում էր «սուր, անխոնջ, կրօնական և աստուածաշնչական միտք մը», XIX դ. երկրորդ կեսի «ամենէն բազմահմուտ եւ սկզբնատիպ լուսավորչական հայր»: Նա տիրապետում էր ութ լեզուների, հեղինակ էր մոտ 150 աշխատաբար աշխատությունների, բացառիկ հարգանք էր վայելում եկեղեցականների շրջանում, որոնցից «շատերը կը յորջորջէին զինքն Հայոց անվեղար Կաթողիկոսը»: Տե՛ս Մրմրեան Յ. Գ., Ստուերք հին դեմքերու, Կ. Պոլիս, 1907, էջ 54; նույնի՝ «Տասնեփններորդ դար եւ Յովհաննես Պրուսացի Տերոյենց», Կ. Պոլիս, 1908:

<sup>10</sup> Մրմրեան Յ. Գ. Ստուերք հին դեմքերու, էջ 54; Զարդարյան Վ. Գ., Յիշատակարան, առաջին հատոր, Կ. Պոլիս, 1910, էջ 357:

նրան անխնա քննադատում էին կրոնական, քաղաքական հայացքների և ազատասիրության դեմ հանդես գալու համար:

Հ. Չամուռճյանի և Ս. Ազնավուրի միջև բանավեճ ծավալվեց մասոնության վերաբերյալ: Ֆրանսիական գրականությունից ու մամուլից մասոնությանը ծանոթ Հ. Չամուռճյանը «Հայկ» եղբայրական ընկերության բարեգործական լինելը կասկածի տակ առավ: Նա «Երևակ» թերթում գրում է, որ «Odd Fellows»-ները և «Հայկ» կամ «Օրիոն» միության անդամները միմյանցից չեն տարբերվում և երկուսն էլ մասոններ են: «Երևակում» տպագրված հոդվածներում և «Խորհուրդ գաղտնի ընկերութանց» գրքում<sup>1</sup> Հ. Չամուռճյանը Կ. Պոլսում մի խումբ երիտասարդների հիմնած «Odd Fellows»-ի մասնաձյուղ «Հայկը» համարում է ոչ թե փոխադարձ օգնության կամ եղբայրական ընկերություն, այլ մասոնական օթյակ: Նա մասոններին անվանում է անկրոն մարդիկ և քրիստոնեության հակառակորդներ, ովքեր «իմաստունք զչարիս գործել ընկերութիւններ հնարեցին եւ որպեսզի նպատակը անունէն չգուշակուի՝ Ազատ որմնադիր (Ֆրանսասոն) անուն դրին»<sup>2</sup>: Մասոնական ընկերությունները «խորին գաղտնութեան մէջ ծածկուած են», դրանց անդամները միմյանց ճանաչելու համար գաղտնանշաններ ունեն, «սաստիկ խորհրդապահ են»<sup>3</sup>: Մասոնները պաշտում են սատանային, չարագործներ են և իրենց «նպատակը գաղտնի կպահեն, որպեսզի հանրությունը չհասկանա, թե ինչով են զբաղված իրականում»: Հ. Չամուռճյանը զարմանք է հայտնում, որ պոլսահայ մի քանի երիտասարդներ ոչ միայն անդամակցել են «Odd Fellows» օտար ընկերությանը, այլև ուրիշներին էլ իրենց կողմն են գրավում: Նա հռետորական հարցադրում է անում, որ եթե մասոնական օթյակները զբաղված են բարեգործությամբ և եղբայրական օգնությամբ, ապա ինչու՞ են գաղտնի գործում: Մասոնության և «Odd Fellows»-ի հայկական մասնաձյուղի մասին Հ. Չամուռճյանի «ցափռտուքներուն մտացին, խոհեմ ու քաղաքավար ոճով»<sup>4</sup> պատասխանեցին Ս. Ազնավուրը և «Մասիս» թերթի խմբագիր Կ. Յուրուճյանը:

«Հայկ» ընկերության պաշտոնական բացումից չորս օր անց՝ 1862 թ. օգոստոսի 25-ին, «Մասիսը» հայտնում էր, որ Մանչեսթրի «Odd Fellows» ընկերությունը Կ. Պոլսի անգլիացիների շրջանում ստեղծել է մասնաձյուղ, որոնց օրինակով հայ ազգայիններից ոմանք արտոնագիր են ստացել իրենց «Հայկ» կամ «Օրիոն» ընկերությունը ստեղծելու: Թերթի տեղեկությամբ՝ «այս ընկերութեան նպատակը մարդկանց մէջ եղբայրասիրութիւն տարածել է՝ առանց ազգի եւ կրօնի խտրութեան, եւ բոլորովին տարբեր է ֆրանկմասոն ըսուած ընկերութենէն»<sup>5</sup>: Թերթը հաջորդ համարում տպագրում է խմբագիր Կ. Յուրուճյանին ուղղված Ս. Ազնավուրի նամակը, որտեղ նա հերքում էր Կ. Պոլսում լույս տեսնող անգլիական «Levant Herald» լրագրի հրապարակումն այն մասին, թե հայերը Պերա թաղամասում մասոնական ընկերություն են ստեղծել: Նա վստահեցնում էր, որ հայկական կազմակերպությունը միացել է Մանչեսթրի «Odd Fellows» եղբայրական ընկերությանը և ոչ թե մասոնությանը: «Շատ ատենէ ի վեր կը փափաքէինք,-գրում էր Ս. Ազնավուրը,-որ մեր ազգն ալ, Ֆրանմասոնեան ընկերութեան դէմ ունեցած անտեղի նախապաշարումները թօթափելով, եղբայրական հիմանց վրայ ընկերութիւն մը հաստատէր, որով կարողանար չքաւոր, թշուառ, հիվանդ եւ պանդուխտ մարդոց նպաստ եւ օգնութիւն ընել»<sup>6</sup>:

Ս. Ազնավուրը հատուկ ընդգծում է, որ իրենց ընկերության նպատակներում ոչինչ ուղղված չէ պետության, կրոնի, մարդկանց դավանանքի և աստվածապաշտության դեմ, ինչպես ոմանք անգիտակցաբար կարծում են: Նկատի ունենալով, որ մասոնական եղբայրության դեմ «ոմանք գաղտնի եւ ոմանք ալ յայտնապէս անզսպելի ընդդիմութիւն մը ունեն», Ս. Ազնավուրը պարզաբանում է, որ իրենց եղբայրական ընկերությունը բնույթով և նպատակով ճիշտ

<sup>1</sup> Այս գիրքը ֆրանսերեն վեպի թարգմանություն է, որը Հ. Չամուռճյանը հատվածաբար տպագրել է «Երևակում»: Ըստ նրա, այն լավ ընդունելություն է գտել եկեղեցականների և աշխարհիկ «մեծարգոյ եւ պատկառելի անծանց» մոտ, ովքեր նրան խնդրել են այդ մասին գիրք գրել: Գիրքը գաղտնի ընկերության անդամ Վալմոնի կոմս դը Լոզանի կյանքի պատմությունն է, որը Հ. Չամուռճյանը իր «նպատակին ուղղակի յարաբերություն չունեցող հատուածները դուրս ձգելով» տպագրել է որպես գիրք: Տե՛ս Չամուռճյան Տերոյենց Հ., Խորհուրդ Գաղտնի ընկերութեանց, Կ. Պոլիս, 1863, էջ ԻԶ:

<sup>2</sup> Չամուռճյան Տերոյենց Հ., նշվ. աշխ., էջ Ը:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ Թ:

<sup>4</sup> «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, N 10, էջ 93:

<sup>5</sup> «Մասիս», 1862, օգոստոսի 25, N 550:

<sup>6</sup> «Մասիս», 1862, սեպտեմբերի 1, N 551:

այնպիսին է, ինչպիսին Անգլիայի դեսպան Հենրի Բուլվեր Լիթոնի «հովանաւորութեան ներքեւ» և սուլթանի բարեհաճութեամբ ստեղծված «Աստղ Արեւելից» է, «որուն յարակից է եւ Հայկ ճիւղը»<sup>1</sup>: Նա «Odd Fellows»-ը ներկայացնում է որպէս մարդասիրական ընկերություն, որն իր անդամների կամավոր հավաքած դրամական միջոցները հատկացնում է բացառապէս հիվանդ, հաշմանդամ և ապրուստի միջոցներ չունեցող մարդկանց: Հաշվի առնելով, որ հազարավոր մարդիկ քաղաքակիրթ եվրոպական պետություններում անդամագրվել են այդ ընկերությանը, շարունակում է Ս. Ազնավուրը, մի խումբ պոլսահայեր իրենց համար մեծ պատիվ են համարել այդպիսի ընկերություն ստեղծել: Հայտնելով «Հայկ» խմբակի ստեղծման մանրամասները՝ Ս. Ազնավուրը «Մասիսում» հրապարակավ «սրտագին երախտագիտություն» է հայտնում անգլիական «Աստղ Արեւելից» օթյակի ղեկավարներ պարոնայք Ուելլին և Առնոլդին, «Վասնզի առանց անոնց ձեռնատուութեան անզօր պիտի ըլլայինք-գոնէ առ այժմ-այս արդիւնաւոր ընկերութիւնը հայոց մէջ ալ կազմելու»<sup>2</sup>:

Ս. Ազնավուրի բացատրությունները «Odd Fellows»-ի և «Հայկի» մասին ոչ մի կերպ Հ. Չամուռճյանին չհամոզեցին դրանց մասոնական օթյակ չլինելու մեջ, ուստի «Երևակում» կրկին հանդես եկավ մասոնության քննադատությամբ: 1863 թ. նա հրատարակեց ֆրանսիական մասոնության մասին պատմող «խորհուրդ գաղտնի ընկերութեանց» գիրքը, իսկ մեկ տարի անց «Երևակում» տպագրեց մասոնության վերաբերյալ 14 հոդված: Դրանցում նա շարունակում էր պնդել, որ իրենց ազատ որմնադիր կամ ֆրանկմասոն համարող մարդիկ զբաղված են սատանայություններով ու գաղտնագործությունեթեամբ, որպէսզի «ամեն մարդ չհասկընար, մեզ ալ չըզեցոցողներուն կարգը կը դնեն»<sup>3</sup>: Հ. Չամուռճյանի համոզմամբ մասոնության «գաղտնի նպատակ ունենալը աներկբայելի է», նրանց օթյակները «յայտնապէս անաստուածներու ընկերութիւն են»<sup>4</sup>, իսկ մասոնների մասին «Չենք կրնար ըսել, թե աղել եւ ողջամիտ մարդիկ են»<sup>5</sup>: Մասոններին համարելով «խորհրդաւոր միաբանութեան անդամներ», Հ. Չամուռճյանը գրում է, որ այդ «անպիտան մարդիկ» միշտ իրենց նպատակին հասնում են, որովհետև նրանց գաղտնի ընկերության մեկ բան որոշելու դեպքում «գործադրութիւնը գրեթէ անվրեպ է, միայն ուշանալը կմնայ»<sup>6</sup>: Մասոնական օթյակների գլխավոր նպատակը համարելով թագավորությունների կործանումը և հանրապետության հաստատումը՝ միապետական կարգի և սուլթանի իշխանության կողմնակից Հ. Չամուռճյանը ցանկություն է հայտնում, որ արևմտահայության մեջ մասոնությունը տարածում չունենա և նրա գաղափարներին «զոհ ըլլալու պարզամիտներ չգտնուին»: Այլապէս մասոնությունը օտարի տիրապետության տակ գտնվող արևմտահայությանը կտանի լուրջ փորձությունների և վտանգի տակ կդնի նրանց գոյապահպանության հարցը: Իր մտավախությունը նա հիմնավորում է նրանով, որ «Տկար ազգ ենք, ավելի մեծ վնասով աչքերնիս բացելուն չըսպասենք»<sup>7</sup>:

Մասոնությունից սպառնացող վտանգի մասին Հ. Չամուռճյանի անհիմն դատողությունները հերքեցին բարձրաստիճան մասոններ Կ. Յուրուճյանը և Ս. Ազնավուրը: Լինելով իր ժամանակի ու գործի մարդը՝ «յառաջադիմասէր եւ ազատամիտ» Կ. Յուրուճյանը մշտապէս հանդես էր գալիս որպէս «ազգային իրավունքների և շահերի ջերմ պաշտպան»<sup>8</sup>: Հանդես գալով այս դիրքերից նա «անճոռնի տրամաբանութիւններով» շարադրած, «քնակարկատ յօրինած եւ անճրինած գիրքը» քննարկելը համարում է «ծանձրալի գործ», քանի որ «մարդիկ արատաւորելու, մրոտելու կը յանդգնի»<sup>9</sup>: Մասոնության մասին Հ. Չամուռճյանի դատողությունները գնահատելով «բարբաջանք», Կ. Յուրուճյանը գրում է, որ եթե մեր ազգի մեջ կան «մեծարգոյ եւ պատկառելի եկեղեցական ու աշխարհական անձինք», ապա նրանք պետք է իմանան, որ «անպատկառ սուտերով կարկըտուած» այդ գիրքը «իրեն խայտառակութիւն եւ արհամարանք բերելէ գատ, ուրիշ բանի չեն կրնար ծառայել»<sup>10</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Չամուռճյան Տերոյենց Հ., նշվ. աշխ., էջ 76-77:

<sup>4</sup> «Երևակ», 1864, օգոստոսի 23, N 32, էջ 253:

<sup>5</sup> «Երևակ», 1864, ապրիլի 8, N 14, էջ 109:

<sup>6</sup> «Երևակ», 1864, նոյեմբերի 1, N 41, էջ 326:

<sup>7</sup> «Երևակ», 1864, օգոստոսի 23, N 32, էջ 253:

<sup>8</sup> Չարդարեան Վ., Յիշատակարան, առաջին հատոր, էջ 86:

<sup>9</sup> «Մասիս», 1863, հուլիս 27, N 598:

<sup>10</sup> «Մասիս», 1863, հուլիս 28, N 599:

Մասոնության բնույթի, նպատակների պարզաբանմամբ և Հ. Չամուռճյանի «Խորհուրդ Գաղտնի ընկերությանց» գրքի «անհեթեթ գրուածքների» մեկնաբանությամբ Ս. Ազնավուրը հանդես եկավ ընդարձակ հոդվածով: Ի տարբերություն Կ. Յութուճյանի ավելի շատ լրագրողական ոճով գրած պատասխանի՝ Ս. Ազնավուրի՝ ընթերցողներին ուղղված խոսքը մասոնության խորագիտակ անձնավորության և բարձրապատիվ մասոնի լրջագույն փաստարկներ և հիմնավորումներ էին: Նա խոստովանում է, որ 10 տարի առաջ անդամագրվել է մասոնությանը և հանդիսանում է Կ. Պոլսում հաստատված մասոնական 7 օթյակներից հինգի հիմնադիրներից մեկը: Գրում է, որ հարկադրված է որոշ պարզաբանումներ անել, որովհետև վերջին ժամանակներս Կ. Պոլսում և այլ քաղաքներում հրատարակվող հայկական որոշ լրագիրներ անհիմն բաներ են գրում մասոնության դեմ: Ավելին, մի քանի վարդապետեր իրենց քարոզներում «չափազանց թշնամաբար» են հանդես գալիս՝ «անգթաբար նզովելով եւ անիծելով մասոնեան եղբայրութիւնը և անոր եղբայրակից անդամները սատանաներ կոչելով»<sup>1</sup>:

Ս. Ազնավուրը պարզաբանում է, որ մասոնները չարագործներ չեն, ինչպես գրում է Հ. Չամուռճյանը, նրանց «նպատակը բոլորովին մարդասիրական եւ ամէն լուսաւորեալ մարդկանց ընդունելի է»: Մասոնները հեռու են ամեն տեսակ քաղաքական և կրոնական կռիվներից, իսկ իրենց անդամների տուրքերը, ամսական վճարները և նվիրատվությունները օգտագործում են իրենց աղքատ ու գոյության միջոցներից գրկված եղբայրներին օգնություն ցույց տալու համար: Մասոնական ընկերության անդամ կարող է դառնալ, առանց խտրականության, յուրաքանչյուր ոք, ով արատավոր, մոլի, վատահամբավ և վատ բարքերի տեր մարդ չէ: Մասոնությունը շատ երկրներում տարբեր անուններով խմբակներ ունի, որոնց հավաքույթների տեղը, օրը և ժամը գաղտնիք չէ: Մասնավորապես իրենց օթյակը հավաքվում է Պերաթաղամասի Ասմալը Մեսջիդ փողոցի թիվ 34 տանը, որը պատկանում է պարոն Պալցերին:

Մասոնությունն իրավամբ անվանելով տիեզերական եղբայրական ընկերություն՝ Ս. Ազնավուրը հերքում է Հ. Չամուռճյանի մերկապարանոց այն պնդումը, թե մասոնները «իմաստունք զչարիս գործեն»<sup>2</sup>: Նա թվարկում է մի շարք երկրների մասոնական մայր օթյակների ղեկավարների, ովքեր «երևելի անձինք են»: Նա հռետորական հարց է տալիս, որ եթե Հ. Չամուռճյանը մասոններին համարում է սատանայությամբ զբաղվողներ և չարագործներ, ապա «ո՞ր կարգի մէջ կը դասէ» մասոնական ընկերության անդամ թագավորներին, արքայազուներին, կոմսերին, դուքսերին, իշխաններին և գորապետերին՝ «Ձչարիս գործող իմաստնոց» դասին գլո՞ւխը, թե ասոնց կոյր է կոյրոյ ինչ ըլլալը չգիտնալով հետևողներուն դասը»<sup>3</sup>:

Բարձրաստիճան մասոն Ս. Ազնավուրն իր առաքելությունը չէր տեսնում սոսկ ազատ որմնադիրներին քննադատող կամ այլապես «խավարամիտներին» արժանի պատասխան տալու մեջ: Նա շարունակում էր նույն եռանդով տիեզերական եղբայրության, ազատության, արդարության, հավասարության վսեմ գաղափարները տարածել արևմտահայության շրջանում: Ս. Ազնավուրը 1850-1860-ական թվականների ազգային սահմանադրական շարժման ակտիվ գործիչներից չէր և դրա ընդունման հետ մեծ հույսեր չէր կապում: Նա պրագմատիկ գործիչ էր և չէր կիսում Կ. Պոլսի այն մտավորականների ու սահմանադրականների ոգևորությունը, թե ազգային սահմանադրության ընդունումով հայերը կարող են «գորաւոր ազգերի շարքին դասուիլ»<sup>4</sup>:

1860 թ. մայիսի 24-ի սահմանադրությունը գործողության մեջ դրվելուն պես պարզ դարձավ, որ «խաբուսիկ ու բարձրագոյ անունով»<sup>5</sup>, մասոն Նահապետ Ռուսինյանի մկրտած «Ազգային սահմանադրության» փառավոր տիտղոսով»<sup>6</sup> փաստաթուղթն իրականում «ներքին ինքնավարութեան օրենք էր»<sup>7</sup>, «ազգային կանոնադրութիւն»<sup>8</sup>, հայ համայնքի և եկեղեցու գործերը կարգավորող կանոնադրություն, ոչ ավելին:

<sup>1</sup> «Մասիս», 1865, մայիսի 1, N 690:

<sup>2</sup> Չամուռճեան Տերոյենց Հ., Խորհուրդ գաղտնի ընկերութեանց, Կ. Պոլիս, 1863, էջ Ը:

<sup>3</sup> «Հայրենիք», 1954, դեկտեմբեր, N 12, էջ 99:

<sup>4</sup> Զիլինկիրեան Գ., Ուղեւորութիւն ի Կոստանդնուպոլիս, Զմիւռնիա, 1883, էջ 56:

<sup>5</sup> Роллен Жекмен М. Г. Армения, армяне и трактаты, «Положение армян в Турции до вмешательства в 1895 году», М., 1986, с. 18.

<sup>6</sup> Սարուխան, Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում 1860-1910, Ա հատոր, Թիֆլիս, 1912, էջ 16:

<sup>7</sup> Ատոմ, Ազգային սահմանադրութիւնը, գծեր մեր մշակույթի պատմութենէն, Կ. Պոլիս, 1914, էջ 28:

<sup>8</sup> Ալաօյաճեան Ա. Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը, Կ. Պոլիս, 1910, էջ 331:

Անգլիայի դեսպան մասոն Հ. Բուլվեր Լիթթոնի միջնորդությամբ<sup>1</sup> սուլթան Աբդուլ Ազիզի 1863 թ. մարտի 17-ի արևմտահայությանը շնորհած «թլապատված» և մասնակիորեն «խեղացած»<sup>2</sup> սահմանադրության «ազդեցութիւնը խիստ փանաքի եղաւ»<sup>3</sup>: Այն խոր հիասթափություն և հուսալքություն առաջ բերեց արևմտահայության շրջանում: Ազգային սահմանադրության առաջացրած համընդհանուր հուսախաբությունը և Կ. Պոլսում ստեղծված «բարոյական հեղձուցիչ մթնոլորտը»<sup>4</sup> հաղթահարելու, հայությանը գոտեպնդելու, ուժ և ազգային ոգի հաղորդելու միակ միջոցը Ս. Ազնավուրը համարում էր մասոնության գաղափարները տարածելը և հայկական օթյակներ ստեղծելը:

Կ. Պոլսում հայկական «Հայկ» կամ «Օրիոն» օթյակի ստեղծումից ամիսներ անց, 1862 թ. հոկտեմբերի 23-ին հիմնվեց «Union d' Orient» («Արևելքի միություն») ֆրանսախոս օթյակը, որի հիմնադիրները մի խումբ ֆրանսիացիներ և հայեր էին: Շաբաթներ անց այս օթյակին անդամագրվեց նաև Սերովբե Ազնավուրը: Ի տարբերություն ֆրանսիական «Բոսֆորի Աստղ» օթյակի, որի անդամները ֆրանսիացիներ էին, «Արևելքի միություն» օթյակի նպատակն էր համախմբել իր շարքերում տարբեր համայքների երևելի անձանց: 1863 թ. մարտի 23-ին կայացած օթյակի հանդիսավոր բացմանը Ս. Ազնավուրի հետ մասնակցում էին նաև հայ ազատ որմնադիրներ Հովհաննես Խուրտաճյանը, Սրապիոն Հեքիմյանը, Գալուստ Էքիզյանը, Հաբեթիկ Նեվրուզյանը և Միքայել Ալիշանը: 1863 թ. դեկտեմբերի 29-ին Ս. Ազնավուրն ընտրվեց օթյակի Առաջին Վարպետ, իսկ 1864 թ. հունվարի 14-ին երդում տվեց որպես օթյակի նախագահ և պաշտոնավարեց մեկ տարի: Այդ ընթացքում օթյակը բավական առաջադիմեց, որի անդամների թիվը հասավ 65-ի: Ս. Ազնավուրի շնորհիվ օթյակին անդամագրվեցին նաև պոլսահայ 12 մտավորականներ ու գործիչներ: «Արևելքի Միությունը» Կ. Պոլսի ամենահեղինակավոր օտարերկյա օթյակներից էր, որը բավական արգասաբեր մասոնական գործունեություն ծավալեց՝ համագործակցելով այլ օթյակների հետ: Այս օթյակին հետագայում անդամագրվեցին նաև Կ. Պոլսում ճանաչված դեմքեր, պետական պաշտոնյաներ և այլ հայորդիներ: 1874 թ. «Արևելքի Միությունը» դադարեցրեց իր գործունեությունը<sup>5</sup>:

Ս. Ազնավուրը կարևոր դերակատարում ունեցավ 1863 թ. ծնունդը Կ. Պոլսում անգլիական «Star of the East» («Արևելքի Աստղ») և հայկական «Հայկ» միության հիմնադրման առաջին տարին միասնաբար նշելու հարցում: 1864 թ. փետրվարի 5-ին նա որպես «Արևելքի Աստղ» օթյակի Առաջին Վարպետ և «Հայկ» օթյակի Գերհարգելի Վարպետ, Հենրի Բուլվեր Լիթթոնին առաջարկեց Պերայի հայկական թատրոնում համատեղ նշել օթյակների հիմնադրման տարելիցը: Դեսպանը հավանություն տվեց այդ առաջարկին և մեկ շաբաթ անց անգլո-հայկական օթյակների պատվիրակներին այդ նպատակով դեսպանատանը պաշտոնական ընդունելության արժանացրեց<sup>6</sup>: Սա վկայում է այն մասին, թե որքան մեծ հեղինակություն ուներ Ս. Ազնավուրն Անգլիայի դեսպանի մոտ, որքան էլ նրանց հարաբերությունները գործընկերային լինեին: Ս. Ազնավուրի և Հ. Բուլվեր Լիթթոնի համագործակցության արդյունքում և նրանց անմիջական նախաձեռնությամբ 1864 թ. ապրիլի 27-ին Ջմյունիայում հիմնվեց հայ մասոնության պատմություն մեջ առաջին հայկական «Տիգրան» թիվ 1014 օթյակը: Այս օթյակի ստեղծումով Ս. Ազնավուրի հեղինակությունն էլ ավելի բարձրացավ հայ ազատ որմնադիրների շրջանում նրան դարձնելով հիրավի «կարկառուն դեմք մը Պոլսոյ և Ջմիւռնիոյ մէջ»<sup>7</sup>: «Տիգրան» օթյակն ակտիվ գործեց մինչև 1876 թ., բայց վերջնականապես փակվեց միայն 1894 թ. հունիսի 6-ին<sup>8</sup>:

Մասոնության շրջանում Ս. Ազնավուրի ունեցած բարձր հեղինակության մասին է վկայում նաև այն փաստը, որ ծագումով իռլանդացի մի քանի պոլսաբնակներ դիմեցին նրան՝ ազգային օթյակ ունենալու խնդրանքով: Նա «Արևելյան օթյակի» անդամ 15 անգլիացիների և

<sup>1</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 160:

<sup>2</sup> Նալբանդյան Մ., Երկերի ժողովածու, հ. 4., Ե., 1983, էջ 292:

<sup>3</sup> Զիլինկիրեան Գ., նշվ. աշխ., էջ 58:

<sup>4</sup> «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 75:

<sup>5</sup> «Հայրենիք», 1955, հունիս, N 6, էջ 94; Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 157-158; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 80-82:

<sup>6</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 159:

<sup>7</sup> «Հայրենիք», 1955, փետրվար, N 2, էջ 79:

<sup>8</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 73, «Հայրենիք», 1955, փետրվար, N 2, էջ 79-81, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 67-75:

իռլանդացիների անունից միջնորդեց «Իռլանդիայի Մեծ Օթյակին», որպեսզի Կ. Պոլսում իռլանդացիներին իրենց օթյակն ունենան: Ս. Ազնավուրի միջնորդությունը բավարարվեց, Կ. Պոլսում ստեղծվեց «Leinster» («Լինսթեր») թիվ 166 իռլանդական օթյակ<sup>1</sup>:

1864 թ. ամռանը Ֆրանսիայի ազդեցությունը Թուրքիայում ուժեղացնելու նպատակով Կ. Պոլիս եկավ «Ֆրանսիայ Մեծ Արևելք» օթյակի Գերագույն խորհրդի անդամ Լուի Ամիաբլը<sup>2</sup>: Ղեկտեմբերի վերջին նրա և Ս. Ազնավուրի միջև պայքար ծավալվեց Ֆրանսիական «Արևելքի Միություն» օթյակի Գերհարգելի Վարպետի պաշտոնի համար: Չայների աննշան տարբերությամբ ընտրվեց Լ. Ամիաբլը: Ս. Ազնավուրը «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի Գերագույն խորհրդին գրած նամակում տեղեկացրեց, որ Լ. Ամիաբլն ընտրվել է այն բանից հետո, երբ ինքը հանել է իր թեկնածությունը: Օթյակի անդամները բարձր գնահատելով Ս. Ազնավուրի ծառայությունները, նրան ընտրեցին օթյակի պատվավոր նախագահ<sup>3</sup>:

Մասոնության գաղափարների տարածման և ազատ որմնադիրների եղբայրական օթյակների ստեղծման գործում մեծ դերակատարում ունեցած Ս. Ազնավուրը մշտապես փափագում էր Կ. Պոլսում հայկական օթյակ ստեղծելու մասին: Զմյուռնիայում հայկական «Տիգրան» օթյակի հիմնադրումից հետո այս խնդիրն առավել հրատապ էր դարձել: Կ. Պոլսի օտարերկյա օթյակների հայ անդամները տեղակացված էին, որ «Արևելքի Միություն» օթյակի Գերհարգելի Վարպետ Լուի Ամիաբլը, ոչ միայն իր օթյակում ակտիվորեն ընդգրկում է թուրք գործիչների ու պաշտոնյանների<sup>4</sup>, այլև մտադիր է թուրքական օթյակ ստեղծել: Այդ նպատակով նա նույնիսկ «Արևելքի Միություն» օթյակի կանոնադրությունը թարգմանեց թուրքերեն: Հայ մասոնները, ի հակակշիռ Լ. Ամիաբլի մտադրության, խնդիր դրեցին Ս. Ազնավուրի առաջ օգտագործել իր կապերն ու հնարավորությունները Կ. Պոլսում հայկական օթյակ հիմնելու համար:

1866 թ. փետրվարի 22-ին Ս. Ազնավուրի նախաձեռնությամբ և 7 հայ ազատ որմնադիրների մասնակցությամբ որոշվեց «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հովանու ներքո հիմնել հայկական «Սեր» օթյակ<sup>5</sup>: Փետրվարի 28-ին Ս. Ազնավուրը «Ֆրանսիայի Մեծ Արևելքին» նամակով տեղեկացրեց օթյակի ստեղծման մասին և փարիզաբնակ մասոն վաճառական Սալոմոն դել Պորտոյի միջոցով կենտրոնին փոխանցեց օթյակի հիմնադրման կապակցությամբ զանազան ծախսերի համար անհրաժեշտ գումարը: Նա միաժամանակ ներկայացրեց «Սեր» օթյակի 18 հիմնադիր անդամ հայ մասոնների ցանկը<sup>6</sup>:

1866 թ. մարտի 2-ին Ս. Ազնավուրը «Ֆրանսիայի Մեծ Արևելքին» տեղեկացրեց, որ «-Սեր» օթյակին անդամագրվել են նաև հայ ազատ որմնադիրներ, բոլորն էլ ֆրանսիական «Արևելքի Միություն» օթյակից<sup>7</sup>: «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» Գերագույն խորհրդի արտոնագրի համաձայն 1866 թ. մայիսի 7-ին Կ. Պոլսում, Պերա թաղամասի Ասմալը Մեջիդ փաշայի թիվ 32 տանը գտնվող իտալական «Italia Risorta» օթյակի դահլիճում տեղի ունեցավ «Սեր» օթյակի հանդիսավոր բացումը: Հանդիսությանը մասնակցում էին Անգլիայի հյուպատոսը, ֆրանսիական դեսպանատան առաջին քարտուղարը, Կ. Պոլսում գործող անգլիական, ֆրանսիական և իտալական գրեթե բոլոր օթյակների Գերհարգելի Վարպետները: Հանդիսությանը չէր մասնակցում միայն «Արևելքի Միություն» օթյակի վարպետ Լուի Ամիաբլը<sup>8</sup>: Նիստը բացեց և ֆրանսերենով ներկաներին ողջունեց Ս. Ազնավուրը, այնուհետև հայ մա-

<sup>1</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161:

<sup>2</sup> Լուի Ամիաբլ (1837-1897), ֆրանսիացի իրավագետ, իրավագիտության դոկտոր, մասոն: 1864-1868 թթ. Կ. Պոլսում ղեկավարում էր ֆրանսիական «Արևելքի Միություն» օթյակը, հետագայում «Բարրեո» ընկերության առաջին նախագահին էր: 1875-1879 թթ. Բարձր դեան իրավախորհրդատու էր, պարզատրվել էր թուրքական «Նիշանի Իֆթիքիար» և «Սոջիդիե» շքանշաններով: 1888-1891 թթ. Փարիզի 5-րդ օկրուգի քաղաքագլուխն էր: 1891թ. Արժանացել է «Պատվո լեգեոնի» շքանշանի: Հեղինակել է ֆրանսիական նշանավոր «Ինը քույրեր» օթյակի մասին գիրքը, որը 20-րդ դարում խիստ քննադատվել է: Տե՛ս Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 85, <https://fr.wikipedia.org/wiki/LouisAmiable>

<sup>3</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 162, Jamgocyan O., Նշվ. Աշխ., էջ 85:

<sup>4</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 162; Jamgocyan O., Նշվ. աշխ., էջ 86:

<sup>5</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 73-74; «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 77, 1955, հունիս, N 6, էջ 91-94; Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 164-165; Jamgocyan O., Նշվ. աշխ., էջ 91:

<sup>6</sup> Տե՛ս «Հայրենիք», 1955, հունիս, N 6, էջ 91, 94; Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 166; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 94:

<sup>7</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 167; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 93:

<sup>8</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 177:

սոններին իր բարեմաղթանքները հղեց Անգլիայի հյուպատոսը: Հյուրերի հեռանալուց հետո հայ մասոնները «Սեր» օթյակի Գերհարգելի Վարպետ ընտրեցին Ս. Ազնավուրին<sup>1</sup>: Այս կարգավիճակում նա գաղափարական հակամարտություն ունեցավ Լուի Ամիաբլի հետ, ով իր դեկավարած «Արևելքի Միություն» օթյակում 1866 թ. հունիսի 12-ի նիստի ժամանակ խստիվ ուրացավ Աստծո գոյությունը: Դա առաջ բերեց օթյակի հայ անդամների ընդվզումը, ովքեր Ս. Ազնավուրի գլխավորությամբ 1867 թ. հունվարի 16-ին բողոք գրեցին «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» Գերագույն խորհրդին՝ առաջարկելով պատիժ սահմանել Լ. Ամիաբլի նկատմամբ՝ Ազատ-որմնադրության Սահմանադրության 29-րդ հոդվածի դեմ դուրս գալու համար: Հայ մասոնների պահանջը «Ֆրանսիայի Մեծ Արևելքը» լռության մատնեց, որի քարտուղարին Ս. Ազնավուրը 1867 թ. հունվարի 30-ին նոր նամակ գրեց՝ սպառնալով հրաժարական տալ օթյակի վարպետի պաշտոնից: Նա միաժամանակ զգուշացնում էր, որ մասոնության սկզբունքները չհարգելու դեպքում ֆրանսիացիները կկորցնեն ամբողջ «Սեր» օթյակը և բազմաթիվ անդամներ «Արևելքի Միություն» օթյակից<sup>2</sup>:

1867 թ. Ս. Ազնավուրի համար ծանր ու բարդ ժամանակներ էին: Հունվարի դրությամբ նա կորցրել էր մորը և ավագ որդուն՝ Անթուանին<sup>3</sup>, իսկ ապրիլին՝ մյուս որդուն՝ 13-ամյա Հովսեփին, պոլսահայ 11 երեխաների հետ ուղարկել էր Վենետիկ՝ կրթություն ստանալու<sup>4</sup>: 1867 թ. փետրվարին Ս. Ազնավուրը «Արևելյան» թատրոնում, ապա «Սեր» օթյակում նշեց Միքայել Նալբանդյանի մահվան տարելիցը, որի ժամանակ հուզիչ ճառով հանդես եկավ մասոն Մատթեոս Մամուրյանը<sup>5</sup>: Տարեվերջին, «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» հետ ունեցած գաղափարական տարաձայնությունների պատճառով, Ս. Ազնավուրը հրաժարվեց «Սեր» օթյակի Գերհարգելի Վարպետի պաշտոնից<sup>6</sup>: «Սեր» օթյակը թեպետ Փարիզի հետ կապերը չխզեց, բայց և սերտ հարաբերություններ չպահպանեց: 1867 թ. «Սեր» օթյակը քիչ քանակով, բայց կարևոր համալրում ունեցավ<sup>7</sup>: Փետրվարի 7-ին «Սեր» օթյակում մասոն ծեռնադրվեց հայ ավետարանական համայնքի ազգապետ Ղազարոս Դավուդը, մարտի 21-ին՝ բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշյանը (1825-1868), իսկ հունիսի 24-ին՝ պալատական հայթայթիչ Սիմոն Բեյ Մաքսուտը: Մ. Պեշիկթաշյանի «Եղբայր եմք մենք» բանաստեղծության հիման վրա գրված երգը դարձավ «Սեր» օթյակի օրհներգը, որը հետագայում երգում էին նաև հայկական մյուս օթյակներում<sup>8</sup>: Ավելի ուշ «Սեր» օթյակին անդամագրվեցին «Արևելքի Միություն» ֆրանսիական օթյակի հայ մի խումբ ազատ որմնադիրներ և շատ երևելի հայորդիներ, հիմնականում մտավորականներ<sup>9</sup>:

1869 թ. Ս. Ազնավուրը կրկին ընտրվեց «Սեր» օթյակի Գերհարգելի Վարպետ: Այդ տարի օթյակի անդամների թիվը հասավ 80, որն ամենաբարձր ցուցանիշն է օթյակի ամբողջ պատմության ընթացքում<sup>10</sup>: «Սեր» օթյակը շուրջ 30 տարվա գործունեության ընթացքում ունեցել է 168 անդամ, որից 162-ը հայ, 5-ը՝ թուրք և մեկը՝ հնդիկ: Նրանց թվում մեծամասնություն են կազմել վաճառականները և դրամատերերը: Օթյակի անդամ են եղել 24 բժիշկ, 21 տարբեր պաշտոնյաներ, 4 փաստաբան, երկու զինվորական, մեկական դատավոր, լրագրող և ուսուցիչ<sup>11</sup>:

1870-ական թթ. Ս. Ազնավուրը թեպետ այլևս «Սեր» օթյակի Գերհարգելի Վարպետ չէր, բայց շարունակում էր ակտիվ գործունեություն իրականացնել և խիստ մտահոգված էր արևմտահայության ճակատագրով: Ի թիվս պոլսահայ համայնքի շատ երևելի դեմքերի, ազ-

<sup>1</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 75, «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 77, 1955, հունիս, N 6, էջ 94, Պէյլէրեան Ա. Նշվ. աշխ., էջ 168; Jamgocyan O. Նշվ. աշխ., էջ 91:

<sup>2</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 76, «Հայրենիք», 1955, հուլիս, N 7, էջ 98; Պէյլէրեան Ա., Նշվ. աշխ., էջ 168:

<sup>3</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա. Նշվ. աշխ., էջ 175:

<sup>4</sup> Տե՛ս Ջարդարեան Վ. Յիշատակարան, Գ մաս, էջ 80:

<sup>5</sup> Տե՛ս «Հայրենիք», 1937, մարտ, N 6, էջ 130-132:

<sup>6</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա. Նշվ. աշխ., էջ 169:

<sup>7</sup> Տե՛ս Jamgocyan O. Նշվ. աշխ., էջ 94, Պէյլէրեան Ա. Նշվ. աշխ., էջ 176:

<sup>8</sup> Տե՛ս «Կեանք եւ Արուեստ», 1935, էջ 76, «Հայրենիք», 1937, մայիս, N 7, էջ 122, 123, 1937, հունիս, N 8, էջ 129-133, հուլիս, N 9, էջ 117, Պէյլէրեան Ա. Նշվ. աշխ., էջ 168, Jamgocyan O. Նշվ. աշխ., էջ 97-98:

<sup>9</sup> Տե՛ս «Հայրենիք», 1955, հուլիս, N 7, էջ 95-96, հունիս, N 6, էջ 94; Պէյլէրեան Ա. ԺԹ դարու հայկական «Սեր» օթեակի անդամ ազատ-որմնադիրներու ընդհանուր ցուցակ, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուբ, 2003, էջ 423:

<sup>10</sup> Տե՛ս Պէյլէրեան Ա. Ազատ որմնադրութեան մուտքը, էջ 169:

<sup>11</sup> Պէյլէրեան Ա., ԺԹ դարու հայկական, էջ 423-424:



գային երեսփոխան Ս. Ազնավուրը նույնպես խորապես տպավորված էր անգլիական քաղաքական գործիչ Ջեյմս Բրայսի ճառով: 1878 թ. փետրվարին Ջ. Բրայսը<sup>1</sup> Սան Ստեֆանոյի դաշնագրի կնքման նախօրյակին, Անգլիայի աշխարհագրական թագավորական ընկերության մի երեկույթի ժամանակ հանդես եկավ արևմտահայությանը ինքնավարություն շնորհելու պահանջով: Ոգևորված դրանից՝ պոլսահայ 169 ազգային գործիչներ և հոգևորականներ նրան շնորհակալական նամակ հղեցին, որոնց թվում էին նաև «Սեր» օթյակի բարձրաստիճան մասոններ Ս. Ազնավուրը, Տ. Յուսուֆյանը, Հ. Մերեմ-գուլին և Հ. Նորատունկյանը: Այս նամակից մի քանի շաբաթ անց Ս. Ազնավուրը նաև անձնական նամակ հղեց Ջ. Բրայսին, որտեղ հայտնում էր, որ «հայ ժողովուրդը իր բարօրութեան եւ յառաջադիմութեան համար անգլիական հովանաւորութիւնը կնախընտրե»<sup>2</sup>:

1879 թ. հոկտեմբերի 28-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում 34 աշխարհիկ մարդիկ մասոններ Ս. Ազնավուրի, Գ. Խուրտաջյանի և այլոց գլխավորությամբ դիմավորեցին Ներսես պատրիարք Վարժապետյանին: Մաղաքիա Օրմանյանը պատրիարքին ներկայացրեց 72 հոգուց բաղկացած մի ցուցակ, ովքեր իր և Ս. Ազնավուրի հետ միասին ցանկանում էին վերադառնալ Հայ Առաքելական եկեղեցու գիրկը: Այդ կապակցությամբ Ս. Ազնավուրի ելույթից հետո հանդես եկան «Սեր» օթյակի երևելի անդամներ Ստեփան փաշա Ասլանյանը և Տիգրան Յուսուֆյանը, ովքեր սրտառու խոսքերով ողջունեցին իրենց մասոն եղբոր դարձը մայր եկեղեցի: Կրոնական արարողությունից հետո պատրիարքարանի մեծ սրահում նրանց պատվին պատվասիրություն տեղի ունեցավ, որտեղ հավաքված «խումբ բազմությանը» մեծ ուրախությամբ այդ իրադարձությունը տոնախմբության վերածեց<sup>3</sup>: 1880 թ. հոկտեմբերի 31-ին Կ. Պոլսի Ազգային ժողովը վարչական խորհրդում դատական գործերի խորհրդական ընտրեց Ս. Ազնավուրին<sup>4</sup>:

«Սեր» օթյակը Ս. Ազնավուրից հետո գլխավորեցին ևս չորս Գերհարգելի Վարպետ՝ Պոլ Կամալիկը, Տիգրան Յուսուֆյանը, Հարություն Նորատունկյանը և Հարություն Մերեմ - Կուլին: Վերջինս օթյակը ղեկավարեց 1885 թ. ապրիլի 16-ից մինչև 1894 թ., երբ թուրքական իշխանությունները Սասունում հայերի կոտորածներից հետո արգելեցին հայկական միությունների հավաքությունները: «Սեր» օթյակի փակմանը նպաստեց նաև Լուի Ամիաբըլը, ով 1894 թ. սեպտեմբերի 17-ին օթյակի ղեկավարներից պահանջեց վերջ տալ իրենց գործունեությանը, քանի որ երեք տարի կանոնավոր նիստեր չէր գումարում: 1895 թ. հուլիսի 3-ին Հ. Մերեմ-Կուլին «Ֆրանսիայի Մեծ Արևելքին» տեղեկացրեց, որ «Յարգելի Սեր օթեակը իր վերջին հանգիստը մտաւ: Բոլոր վավերաթղթերը ապահով տեղ պահուած են»<sup>5</sup>:

Ս. Ազնավուրի ստեղծած «Սեր» օթյակը հայ մասոնության պատմության մեջ ուրույն տեղ ունի: Այդ օթյակը նա հիմնեց ոչ թե «խավարյալների ու լուսավորյալների», «ներսենդուրսեններին», «աջակողմյանների ու ձախակողմյանների» պայքարը շարունակելու, այլ ամենից առաջ ազգային միություն, համերաշխություն, եղբայրություն, լուսավորություն և առաջընթաց ապահովելու համար: «Սեր» օթյակը ամենամեծաքանակ և ամենաերկար և արդյունավետ գործած օթյակն էր, որին Ս. Ազնավուրի ջանքերի շնորհիվ անդամագրվել էր ոչ միայն պոլսահայ մտավորականության և վաճառականության ընտրանին, այլև մեծ թվով պետական բարձրաստիճան պաշտոնյաններ ու ազգային գործիչներ: Ս. Ազնավուրը Կ. Պոլսում և Ջնյուռնիայում երիտասարդ մտավորականների մի ամբողջ սերունդ ձևավորեց, որոնց թվում էին նաև իր երկու զավակները: Նրանցից իր մահկանացուն անժամանակ կնքած 23-ամյա Անթուանը (1844-1867), չնայած երիտասարդ տարիքին, կայացած մասոն էր: Նա «Արևելքի Միություն» օթյակի վարպետ էր, իսկ մահվանից ամիսներ առաջ հոր հետ մասնակցեց

<sup>1</sup> Ջեյմս Բրայսը (1838-1922) խստորեն դատապարտել է 1890-ական թթ. հայության կոտորածները և 1915թ. ոճրագործությունը, Ա. Թոյնբիի հետ պատրաստել է հայոց ցեղասպանության մասին հանրահայտ «Կապույտ գիրքը»: Նրա մասին մանրամասն տե՛ս Seanson John. A Citizen of the World: The Life of James Bryce. London / New York, 2006.

<sup>2</sup> Պէյլերեան Ա., նշվ. աշխ., էջ 170:

<sup>3</sup> Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, Գ հատոր, մասն Բ, Պէյրուք, 1961, էջ 4359-4360:

<sup>4</sup> Տե՛ս Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 487:

<sup>5</sup> «Հայրենիք», 1955, ապրիլ, N 4, էջ 101, Պէյլերեան Ա., նշվ. աշխ., էջ 172, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 107:

«Սեր» օթյակի հիմնադրմանը<sup>1</sup>: Կրտսեր որդի Հովսեփը, ով հայտնի ճարտարապետ էր, մասուն ձեռնադրվեց 1791 թ. դեկտեմբերի 26-ին, իտալական «Italia Risorta» օթյակում<sup>2</sup>:

Ս. Ազնավուրի ձևավորած ազատ որմնադիրների սերունդը հավատարմորեն ծառայեց մասնության գաղափարների և սկզբունքների տարածման գործին՝ իրենց ներդրումն ունենալով Ազգային սահմանադրության առաջացրած հուսախաբությունը հաղթահարելու, ստրկամտությունը վերացնելու, պոլսահայության կռիվներն ու երկպառակությունները հաղթահարելու ուղղությամբ: Տեղեկական եղբայրության, մարդկային համերաշխության, փոխօգնության գաղափարները տարածելու գործում հայ մասունները «լուսավոր փարոսներ եղան Մերձավոր Արևելքի մահմեդական ովկիանոսին մէջ»<sup>3</sup>: XIX դ. այդ փարոսներից ամենապայծառն, անշուշտ, «հայ որմնադրության մէջ եզական դեմք»<sup>4</sup> Սերովբե Ազնավուրն է, ով հավատում էր, որ իր ստեղծած օթյակներին կհաջողվի իրականացնել այն ամենը, ինչը չկարողացան իրագործել «ոչ որևէ հայ ընկերություն, ոչ եկեղեցին, ոչ Ազգային Սահմանադրական ժողովը»<sup>5</sup>: Այս իմաստով նրա կյանքը մասնության գաղափարախոսությանը, սկզբունքներին և գործին անմնացորդ նվիրվածության ու հավատարմության լավագույն օրինակ է:

**Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР.** Серовбе Азнавур – один из самых видных западноармянских масонов, который в качестве вольного каменщика был широко известен в Константинополе и Смирне. Его связи с масонством относятся еще к годам учебы в Англии. В 1854 г. он вступил в английскую ложу “Jordan” (Иордан) № 201, был избран Великим Инспектором, затем вступил в ряды тайного братского общества “Odd Fellows” Манчестера.

Преисполненный идеями европейского просвещения, прогресса и свободомыслия, С. Азнавур, вернувшись в родной Константинополь, принялся распространять идеи вольных каменщиков и формировать масонские ложи. С. Азнавур был масоном высокой степени посвящения и являлся основателем пяти из семи масонских лож, действующих в Константинополе. В 1856 г. он стал одним из высокопоставленных масонов в английской ложе “Oriental” (“Восточная”) № 687.

В англоязычной ложе “Homer” (“Гомер”) № 806, созданной в 1895г. в Смирне, С. Азнавур занимал должность Великого Инспектора, а в 1861г. был избран Достопочтенным Мастером константинопольской английской ложи “Bulwer” (“Булвер”) № 891. В 1862 г. С. Азнавур основал в Константинополе филиал манчестерского братского общества “Odd Fellows” - “Айк” или “Орион”, затем вступил во французскую ложу “Union d’Orient” (“Объединенный Восток”), а спустя год был избран Первым Мастером. По его инициативе в 1864 г. В Смирне была основана первая армянская ложа “Тигран” №1014, а в 1866 г. в Константинополе - ложа “Сер” (“Любовь”), где он занимал должность первого Достопочтенного Мастера. В истории армянского масонства С. Азнавур остался как уникальная личность, который «был лучезарным маяком в мусульманском океане Ближнего Востока».

**Ключевые слова:** Константинополь, Смирна, масонство, вольный каменщик, ложа, мастер, сверхпревосходный мастер, «Великая ложа Англии», «Великий Восток Франции».

**Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR.** Serovbe Aznavour is one of the most prominent figures of the 19<sup>th</sup> century of Western Armenian masonry, who, as a Freemason, was too popular in Constantinople and Zmyurnia. Came to know masonry during his studies in England In 1854, he joined English “Jordan” lodge No. 201. He was elected Grand Superintendent of the lodge, and then replenished the ranks of Manchester “Odd Fellows” fraternal secret company. Returning to native

<sup>1</sup> Տե՛ս «Հայրենիք», 1955, հունիս, N 6, էջ 94, Պէլլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 176; Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 94:

<sup>2</sup> Տե՛ս Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 107:

<sup>3</sup> Ֆէնէրճեան Ա., Ազատ որմնադրութիւնը հայոց մէջ, «Հայրենիք», 1954, հոկտեմբեր, N 10, էջ 93:

<sup>4</sup> «Հայրենիք», 1954, հոկտեմբեր թիվ 10, էջ 93:

<sup>5</sup> Բերբերեան Ռ., Հայ մասունները եւ «Սեր» օթյակը Պոլսոյ մէջ, «Հայրենիք», 1937, մարտ, N 5, էջ 83:

Constantinople, S. Aznavour, inspired by the ideas of European enlightenment, progress and freethinking, embarked on spreading the ideas of masonry and creating the lodges.

Aznavour was a high-ranking man, one of the five founding members of the masonic seven lodges in Constantinople. In 1856, he became one of the high-ranking masons of English "Oriental" lodge No. 687. In 1859, in the English-speaking "Homer" lodge No. 806, founded in Zmyurnia, S. Aznavour occupied the position of Grand Superintendent and in 1861 was selected Grand Master of English "Bulwer" lodge No. 891 in Constantinople. In 1862 S. Aznavour founded the branch "Hayk" or "Orion" of "Odd Fellows" fraternal company of Manchester in Constantinople; he joined the French lodge "Union d'Orient" and a year later he became the First Master. In 1864, on his own initiative, the first Armenian lodge "Tigran" No. 1014 was founded in Zmyurnia. And in 1866, he founded the lodge "Love" in Constantinople where he was the first Grand Master. In the history of Armenian masonry, Aznavour was a unique figure, who became "a glowing beacon in the Muslim ocean of the Middle East".

***Key words:*** Constantinople, Zmyurnia, masonry, Freemason, a lodge, master, Grand Master, "United Grand lodge of England", "The Great East of France".